

ուսպաշտութիւնը կամ սնոտի չաստուած-
ներն էին որ կը կլանէին մարդկային հո-
գին, նոյնպէս ալ նախ քան Փաստէօն՝
բժշկութիւնը կը սահմանափակուէր ա-
ղօթքի, յուսուածքի, բժշանքի եւ բնու-
թեան ծոցէն քաղուած բոյսերու եւ ծա-
ղիկներու բոյրին եւ թոյրին, համին ու
հոտին կոյր զկոյր հաւատքին մէջ:

Երկու վարդապետութիւնները սէր ու
մխիթարութիւն պարգեւեցին մարդկու-
թեան, առանց դասակարգի խտրութեան,
բոլորանուէր կերպով: Ինչպէս որ աշխար-
հիս վրայ չկայ քրիստոնեայ մը որ մը-
խիթարութիւն դտած չըլլայ քրիստոնէու-
թեան վսեմ գաղափարներէն ներշնչուած,
այնպէս ալ չկայ հանուր աշխարհիս վրայ
մէկը՝ որ օգտուած չըլլայ փաստէօնեան
վարդապետութեան բարիքներէն:

Երկուքին ալ հմայքը այնքան շացու-
ցիչ դարձաւ, որ քաղաքակրթութեան
ճամբուն ընթացքին, անոնցմէ իւրաքան-
չիւրը մէկ մէկ անմոռանալի անկիւնա-
դարձեր յօրինեցին, անխորտակելի կոթող-
ներ կանգնեցին, հիմնաքարը դնելով «նա-
խա» եւ «յետա» քրիստոնէական ու փաս-
տէօնեան դարաշրջաններուն:

Արդարեւ, Փաստէօնի հանճարին ար-
ձակած շողերովն էր որ կը փարատէր բը-
ժշկութեան վրայ թանձրացած հաղարա-
մեակներու մառախուղը, կը պարզուէր ու
կը փայլէր ճշմարտութիւնը, եւ խոստ-
մնալից գեղեցիկ հորիզոններ կ'ուրուա-
զծուէին:

Անոր հանճարին ցոլացումներովն ու
անոր գծած լուսաւոր ուղիներովը ընթա-
ցան ու պիտի ընթանան բժշկական մար-
դին մէջ կատարուած ու կատարուելիք մե-
ծագոյն նուաճումները:

Ճակատագրի տարօրինակ մէկ զուգա-
դիպութեամբ, արդիական բժշկութեան
այս մեծ քուրմը, եւ ոչ իսկ անոր տիտղո-
սաւոր մէկ անգամն էր, այլ տարրաբան
մը:

Հակառակ այս հանգամանքին, հակա-
ռակ բոլոր խոչընդոտներուն ու թշնամա-
կան վերաբերումներուն, անոր հանճարին
սլացքը բարձունքէ բարձունք սաւառնե-
ցաւ, նուաճումէ նուաճում ընթացաւ,
մինչեւ իսկ անդամալոյծ ըլլալէն ետք:

Փաստէօնի հանճարը մի միայն իր պայ-
ծառ իմացականութեամբը չէր որ փայլե-
ցաւ, այլ ի ծնէ փայլուն եղող այս միտ-
քը, պարուրուած ու չաղախուած էր հո-
գեկան ու բարոյական այնպիսի անըստ-
զիւտ բարեմասնութիւններով, որոնց նը-
մանը եւ համադրումը դժուար է գտնել
մէկ անձի մը քով:

Իր նկարագրին առանցքը՝ սիրոյ զգա-
ցումն է, իր զանազան երանգաւորումնե-
րով ճիւղաւորուած:

Այդ զգացումը այնքան վճիտ ու ջինջ
է, որ իր բիւրեղացած վիճակին մէջ մի-
այն՝ առատօրէն կը հոսի հոգիի ակունք-
ներէն:

Սիրոյ յորդառատ այդ հոսանքը կը տա-
րածուի ու երթալով կը խորանայ, իր տա-
րողութեան ամենաթաքուն եւ հեռաւոր
անկիւններուն մէջ իսկ համահաւասար
չափով բարիք սերմանելու աստիճան:

Գեհեհային ոչ մէկ մտածում կ'արատա-
ւորէ անոր բեղնաւոր միտքն ու հոգին,
անոր յղացումները մի միայն դէպի բա-
րին կը ձգտին, ու միայն մէկ նպատակի
մը կը ծառայեն՝ նպաստել մարդ էակի
երջանկութեան, ու շատ մը կենդանիներ-
բու զոյուլութիւնը մահուան ճիրաններէն
փրկել:

Ահա թէ ինչո՞ւ դարերու երկունքով
ծնած մարդկութեան այս մեծագոյն հան-
ճարը, տիպար ծնողասէր մը, ընտանեւէր
մը, ազգասէր մը, մարդասէր մը, ուսում-
նասէր ու ճշմարտասէր մը հանդիսացաւ:

Սիրոյ այդ բացառիկ արտայայտու-
թիւններն էին որ հրահրեցին, ազնուա-
ցուցին ու մեծցուցին իր հանճարին փայ-
լատակումները՝ կարեկից դարձնելով զայն

հիւանդին, մահամերձին, մանուկներուն
ու տառապողին հանդէպ:

Այս խմորումով հանճարի մը պէտք ու-
նէր մարդկութիւնը, կարենալ լաւագոյն
կերպով օգտագործելու համար մանրէնե-
րու խորախորհուրդ զոյուլութեան քողա-
ղերծումը:

Ան, ամենադժուարին պայմաններու
մէջ աշխատելով հանդերձ, խոնաւ ու
մուր խցիկի մը անհրապոյր պատերուն
մէջ արգելափակուելով, զոյգ մը կարե-
ւոր իրողութիւններու էութիւնը կը ճըշ-
դէր ու կը պարզաբանէր:

Մին՝ ոգելից ըմպելիներու խմորումին
հետ կապ ունէր: Ան ապացուցուց՝ թէ շա-
քարը ալբոյի, ալբոյը քացախի, եւ քա-
ցախն ալ ջուրի վերամասն խորհրդաւոր
երեւոյթներուն իւրաքանչիւրին պատճա-
ռը, մանրադէտով տեսանելի մասնայա-
տուկ էակներու՝ խմորակներու արդիւնքն
էր:

Իսկ միւսը՝ կ'ապացուցանէր թէ ինք-
նաբերական սերում զոյուլութիւն չունէր
բնութեան ծոցին մէջ, մուկը՝ ցորենածին
չէր, ոջիւն ու լուսն՝ քրտնածին չէին, ինչ-
պէս կը կարծուէր անյիշատակ ժամանակ-
ներէ ի վեր, այլ մինչեւ իսկ ամենայնոյն
էակը յառաջ կու գար ո՛չ թէ ոչինչէն,
կե- ալ կենդանի բջիջէ մը: Որ է ըսել, կե-
նաց կայծին փոխանցումովն է որ մուկէն
մուկ մը կը ծնի, ոջիւն՝ ոջիւ մը, ձու-
կէն՝ ձուկ մը, եւ թէ անէութիւնէն կը դո-
յանան կենդանիներն ու բուսական աշ-
խարհը:

Ոգելից ըմպելիներու խմորումին գաղտ-
նիքը քողաղերձ ըլլալէն վերջ էր որ Փաս-
տէօն եւ իր գործակիցները նախատեսե-
ցին, թէ ախտային զանազան երեւոյթնե-
րուն իւրաքանչիւրն ալ իր մասնայատուկ
պատճառը պէտք էր ունենար:

Իրականութեան մէջ Փաստէօնի այս
մտածելակերպը նախատեսութիւն մը ըլ-
լալէ աւելի, ճշգրիտ զնահատումն էր իր-

մէ մէկ ու կէս դար առաջ հոլանտացի
Ժանեակալմաճուրի մը՝ Անտոն Վան Լիւ-
ուենհոքի կողմէ երեւան հանուած, ապա
մոռացութեան մատնուած խիստ կարեւոր
զիւտի մը:

Տելֆոր քաղաքը կը բնակէր հօրմէ ու
մօրմէ անյայտ այս մարդը, 1637–1723.
ան իր նախնական ուսումը աւարտելէ
վերջ կը մտնէր դերձակի մը քով, ապա
Ժամանակ մըն ալ դատարաններու մէջ
քարտուղարի պաշտօն կը վարէր. վերջա-
պէս անձնական խանութ մը բանալով, կը
զբաղէր Ժանեակի եւ ասեղնագործերու
տոկետներով:

Քաշուած ու մենակեաց այս մարդը, իր
գործէն դուրս, պարագայ ժամերը կը նը-
ւիրէր ոսպրակներու յղկումին պատրաս-
տութեան:

Իր պատրաստած այդ ոսպրակները մե-
տադէ խողովակի մը մէջ պատշաճօրէն
համախմբելով ու զետեղելով, կը տեսնէր
որ պատշաճ դասաւորումով մը, սովորա-
կան մանր իրերը տարօրինակ կերպով կը
խոչորնային ու անոնց վրայ գտնուած
աչքով անտեսանելի մանրամասնութիւն-
ները՝ տեսանելի կը դառնային:

Այլեւս մանրէադէտը հնարուած կարե-
ւոր էր համարել: Անհրապոյր տեսքով այս
մարդուն զբաղները, իր խորհրդաւոր
գործունէութիւնէն տպաւորուած, «Բու»
կը կոչէին զանիկա, ու հասարակ խենթի
մը տեղը դրած էին:

Ահա՛ այս խենթ կարծեցեալն էր, որ
մարդկային պատմութեան մէջ առաջինը
ըլլալով, ակնհայտաբար կ'ըլլար արեւան մէջ
գտնուող զնդիկներուն եռուղեւին, կայ-
տառ սերմնաբջիջներու տպաւորիչ տող-
անցքին, բոյսերու բեղմնաւորիչ տարրե-
րու կերտուածքին, ինչպէս նաեւ միջատ-
ներու մարմնին զանազան մասերուն այ-
լանդակ մանրամասնութիւններուն:

Այս անպատրաստի մանրէադէտը, զի-
ւերները ցերեկին խառնելով, քունը, հան-

դիտար և և դործը մէկ կողմ ձգած, երազային աշխարհի մը անսահման վայելքներով կ'անցընէր ժամանակը:

Օր մը, սաստիկ ատամնացաւ մը կ'ընդհատէր իր բեղմնաւոր պրպոտումները: Զայրոյթով ու արհամարհանքով կը քաշէր ցաւող այդ ակոսն, ու մանրակրկիտ կերպով կը քննէր անոր արմատին վրայ գտնուող փութեան խոռոչիկը:

Գնդասեղի մը ծայրով կը պարպէր անոր պարունակութիւնը, կաթիլ մը ջուրով կը տարածէր դայն ապակիի մը վրայ ու իր հնարած գործիքով կը ղնէր:

Վան Լիուենհոքի (Van Leeuwenhoek) աչքերուն առջեւ կը պարզուէր չլացուցիչ տեսիլք մը, մանր գնդիկներու, կարծ ու նրբակազմ ցողիկներու խմբակներ կը տեսնուէին, որոնք կը փայլէին պատրաստութեան մակերեսին վրայ, ու աստղադարձ երկնքի մը տպաւորութիւնը կը ձգէին:

Առաջին մարդն էր, որ կը թափանցէր մանրէներու խորհրդաւոր աշխարհէն ներս, բայց ան երբեք մտքէն չանցուց թէ այդ պղտիկ էակներն էին ատամին փութեան պատճառը, երբեք չհասկցաւ թէ անոնք էին ատամնացաւին խորհրդաւոր ազդակները, ու երբեք չկասկածեցաւ թէ անոնք էին մարդկութեան ահաւոր թշնամիները:

Բայց հակառակ այս հանգամանքին, Վան Լիուենհոքի շնորհիւ նոր աշխարհ մը երեւան կ'ելլէր, աշխարհ մը՝ որուն գոյութիւնը երբեք չէր նախատեսուած, աշխարհ մը՝ որ մութին մէջ թաղուած ուխտարհ մը կը նմանէր, ուր անթիւ ու անհամար կեանքի փոքրիկ հիւլէներ տեսական եռուզեռով կը խայտային ու մարդկութեան ահաւոր թշնամիները կը հանդիսանային:

Նորագիտ այդ աշխարհը՝ անհունապէս փոքրերունն էր, ու պէտք էր որ մարդկութիւնը դայն լաւ մը պեղէր և ուսումնասիրէր, որպէսզի կարելի ըլլար

հանգամանորէն ու գիտականորէն պայքարիլ անոր դէմ ու նուաճել դայն:

Գիտական աշխարհը պահ մը զբաղեցաւ Վան Լիուենհոքի մատնանշած փոքրիկ գնդիկներու գոյութեամբ, մինչեւ իսկ դոնուեցան հեղինակաւոր անձնաւորութիւններ, որոնք կարծեցին թէ անոնք կրնային անմիջական պատճառը ըլլալ դանդաղ հիւանդութիւններու, և այդ ուղղութեամբ կենդանիներու վրայ փորձեր ալ կատարեցին, բայց չկրցան ապացուցանել իրենց ենթադրութիւնները:

Այդ օրերու գիտնականները այլևս աւելորդ նկատեցին այդ խնդրով ժամաւաճառ ըլլալ ու բոլորովին անտեսեցին Վան Լիուենհոքի զգայացունց գիտութիւնը:

Գիտնականներու այս վերաբերումը բացատրիկ երեւոյթ մը նկատելու է՝ և պէտք է զարմացնէ մեզ:

Ինչ որ ալ ըլլայ գիտի մը արժէքը, դայն արդիւնաբերելու և ընդհանրացնելու համար ժամանակի կը կարօտի:

Այդ ուղղութեամբ ընթացաւ մինչեւ իսկ մեր օրերու հրաշք դեղը՝ փեմիսիլին-ին գիտն ու օգտագործումը:

Անհեթեթութիւնները, ընդդիմութիւնները, վրիպանքներն ու թերգնահատութիւնները սովորաբար կը կասեցնեն նոյն ժամանակ մը ընթացքը, և պրպոտմի շրջանէ ետքն է որ մեծագոյն գիտերը կը գնահատուին ու արժէքի կը վերածուին:

Բացասական այդ շրջանը, որ իրականութեան մէջ երկունքի շրջան մը պէտք է նկատել, մէկ ու կէս դար խլեց մանրէներու էութիւնը ճշգրիտ պարագային:

Վերջապէս հանճարն ալ ենթակայ է սահմանափակումներու, անոր իմացական փայլը, որքան ալ զօրաւոր ըլլայ, չի կրնար քողարկուած իրականութեան մը ամբողջական ծալքերը երեւան հանել:

Ուրիշներ պէտք է դան մնացած թերիները լուսարանելու և լրացնելու համար: Ընտրեալներու հաւաքական և յաջոր-

դական նուաճումներովն է որ մեծագոյն գիտերը գլուխ կը հանուին ու կ'ամբողջացուին:

Այդ ուղղութեամբ ընթացաւ նաեւ Վան Լիուենհոքի զգայացունց գիտութիւնը, անմիջականորէն չնպաստեց մարդկային յառաջագիտութեան, ո՛չ միայն անբացատրելի մնաց երեւան հանուած մանրէներու գոյութեան իմաստը, այլ նաեւ երկար ատեն շատ մը գիտնականներ շիթութեան մատնեց:

Այս դոյալիճակը պիտի տեսէր մինչեւ Փաստէօնի հանճարին յայտնաբերած անառկելի նուաճումներուն իրականացումը:

Վան Լիուենհոքի հնարամտութեան արդասիքը եղող մանրէազէտը, բժշկական գիտութեան յառաջագիտութեան տեսակէտով, ամենակարեւոր գիտերէն մին պէտք է նկատել:

Անիկա տեսակ մը բանալի էր, խորհրդաւոր աշխարհի մը դռները բացող:

Փաստէօն դայն լաւագոյն կերպով օգտագործողը հանդիսացաւ: Անով կը բաւարարուէին անձանց հոգեւոր մը, ուր բոլորովին անձանց հոգեւորներ կ'ուրուագծուէին, ուշի ուշով կը քննէր ու կը ղնէր Վան Լիուենհոքի ընդհամարած անսահմանորէն փոքրերու գոյութիւնը, ու առանց տատամսելու երեւան կը հանէր մարդկութեան դարանակալ ահաւոր թշնամիները:

Զորութիւնն ու թացութիւնը, տաքութիւնն ու պղտիւնը, կարծրութիւնն ու կակղութիւնը դադրեցան ախտածին դրդիչներ ու պատճառներ հանդիսանալէ, ու փոխարինուեցան մասնայատուկ մանրէփոխարինուեցան մասնայատուկ մանրէներու աւերիչ գործունէութեան նորագիտ տեսլականով:

Հնադարեան նեխած բժշկութիւնը մէկ անգամ ընդմիջող դերեղման կը դրուէր, ու հիմը կը դրուէր գիտական ու փորձառական տուեալներու վրայ հաստատուած

բոլորովին նոր գիտութեան մը, որուն հարազատ արտացոլացումն է մեր օրերու և ապագայի բժշկութիւնը:

Շնորհիւ Փաստէօնի, փոքր տարրերուն գոյութիւնն ու դերը ճշգրիտէն ետք, երեւան կը հանուէին սքրեփոփոփ-ը, սքաֆիլաֆոփ-ը, թոքախտի մանրէն եւն, ու այլևս պարզ քեֆֆիփ-ի մը հարցի կը վերածուէր ծանուցումը մեզի ծանօթ միւս բոլոր մանրէներուն վրահակին:

Մանրէներուն գիտութիւնը ո՛չ միայն կը ճշգրիտէին հիւանդութիւններու դրդապատճառները, այլ նաեւ գիտական աշխարհին առջեւ կը պարզուէր անոնց դէմ յարմարագոյն կերպով պայքարելու յուսալից հորիզոններու հեռավարութիւնը:

Լաւագոյն դրաւականը թշնամիի մը յաղթելու կամ անկէ պաշտպանուելու համար՝ այդ թշնամին ճանչնալն է:

Պէտք է ճանչնալ հակառակորդը, անոր գործելիւնն ու տկարութիւնները, հնարամտութիւններն ու ռազմավարութիւնները, որպէսզի կարելի ըլլայ իմաստուն կերպով անոր դէմ պայքարիլ ու անկէ պաշտպանուիլ:

Փաստէօնի հանճարին արդասիքով ո՛չ միայն կը յեղաշրջուէր բժշկական գիտութեան հոլովոյթն ու ընթացքը, այլ նաեւ մեծապէս կը նպաստաւորուէին շարք մը ճարտարարուեստներ:

Ճիշտ է, Փաստէօն սիրով կը նուիրաբերէր իր կեանքին ամէն մէկ րոպէն, դըլխաւորապէս գինաթափ ընելու համար մահուան ձեռքերուն մէջ գետեղուած հատու մանգաղը, բայց այդ ուղղութեամբ իր թափած ճիգերուն համընթաց երեւան կ'ելլէին այնպիսի իրողութիւններ, որոնք մեծապէս կը նպաստէին գինիի, դարեղութեան, քացախի պատրաստութեան. ինչպէս իր, քացախի պատրաստութեան, հաւարութեան և արջաբուրդութեան:

Այս կարգի նուաճումներով, Փաստէօն ոչ միայն անթիւ ու անհամար օգտակար

